ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ—Տաղեր և գանձեր *(աշխատասիրությամբ Ա. Քյոշկերյանի), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 447 էջ։*

Աշխատությունն ընդգրկում է գանձարանային մշակույթի խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ Ներսես Շնորհալու, ավելի քան հիսուն տարվա (1120—1173) ստեղծագործությունները (տաղեր և գանձեր)՝ գիտաքննական բնագրերով։ Քննական բնագրերը կազմելու համար օգտագործված են ինչպես Մաշտոցի անվան Մատենադարանի հարուստ հավաքածուի մասը կազմող շուրջ չորս տասնյակ ձեռագիր, այնպես էլ ավելի քան վեց տասնյակի հասնող տպագիր աղբյուրներ, որոնք հագեցած են երգայնությամբ, ունեն սահուն, դյուրըմբռնելի ոճ։

Գիրքն ունի ներածություն, հավելվածներ, ծանոթագրություններ, ցանկեր, օգտագործված աղբյուրների ցանկ, հատուկ անունների ցանկ։

Պատասխանատու խմբագիր՝ Պ. Մ. Խաչատրյան։

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ—Երկեր։ Հինգ հատորով, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 505 էջ։

Հատորում ընդգրկված են պատմական Արցախի տարածքի մեջ մտնող Վարանդա և Գանձակ գավառներին վերաբերող ազգագրական, բանահյուսական, վիմագրական նյութեր, որոնք հավաքել, դրի է առել ու լուսանկարել Ե. Լալայանը։ Հատորում տրված են յուրաքանչյուր ազգագրական շրջանի պատմական համառոտ տեսությունը, տարածքի տեղագրությունը, կլիման, բուսական ու կենդանական աշխարհի պատկերը, օգտակար հանածոները, նշանավոր քաղաքները, գյուղերը, պատմական ու ճարտարապետական հուշարձանները։ Հատուկ ուշադրություն է դարձված բնակչության կազմին ու տեղաշարժին, նույն տարածքում ապրող այլ ազգերի ու ժողովուրդների կյանքին, կենցաղին ու բարքերին, տնտեսական զբաղմունքին, ընտանեկան բարքերին ու ծեսերին, կուլտուր-լուսավորական կյանքին, հոգևոր մշակույթի երևույթներին։ Հատորն ունի լուսանկարներ, քարտեզ, ծանոթագրություններ, ցանկեր, անձնանունների և տեղանունների բաժին։

Պատասխանատու խմբագիր՝ Դ. Ս. Վարդումյան։

ԱՄԱԼՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ—Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 220 էջ։

Աշխատության չորս գլուխներում խոսվում է հայերենի հնչյունային համակարգի ուսումնասիրության մասին։ I գլխում ներկայացված է լեզվի հնչյունային կողմը. հնչույթ, հնչյուն և տարբերակիչ հատկանիշ, հնչույթի ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ։

Ձայնավորների և բաղաձայնների համակարգերի մասին պատմվում է գրքի II գլխում։ III գլխում հատուկ ուշադրություն է դարձվել հայերենի հնչույթների տարբերակիչ հատկանիշներին (լարվածություն/ոչ լարվածություն, շնչեղացում/ոչ շնչեղացում)։ Իսկ հայերենի հիմնական տարբերակների արտաբերական և ֆիզիկական նկարագրությունը տրված է IV գլխում։ Աշխատությունն ունի ամփոփում (ռուսերեն), գրականության ցանկ և համառոտագրություններ։

Պատասխանատու խմբագիր՝ Ռ. Մ. Թոխմախյան։

ՇՈՒՇԱՆԻԿ ԽԱՉԻԿՅԱՆ—Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա տնտեսատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII—XVIII դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 223 էջ։

Գրքում բացահայտվում են հայ առևտրական կապիտալի կենտրոն Նոր Ջուղա հայկական գաղութի ինքնավար մարմինների կառուցվածքն ու գործունեության շրջանակները։ Գրքի 3 գլուխներում խոսվում է 1667 թ. կնքված հայ-ռուսական առևտրական պայմանագրի, Շահրիմանենց, Խոջա-Մինասենց, Սգազարյանների (Լազարյանների) առևտրական ընկերությունների մասին (I գլուխ)։ Քննվում են վարկավաշխառուական հարաբերությունները հայ խոջայական միջավայրում, փոխանցային մուրհակի (փոխանցագրի) կիրառությունը և նրա զարգացման մակարդակը (II գլուխ)։ Տնտեսական այլ ոլորտներում հայ առևտրականների գործունեության և կապիտալիստական արտադրության սաղմնավորման գործում դրանց դերի մասին խոսվում է գրքի վերջին գլխում։ Գիրքն ունի ամփոփում (ռուսերեն)։

Պատասխանատու խմբագիր՝ Հ. Դ. Փափազյան։

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆՅԱՆ—Սայաթ-Նովա։ Կյանքը և գործը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 357 էջ։

Աշխատության մեջ ներկայացվում է հայ խոշորագույն սիրերգակ, աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովայի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը։

Գիրքն ունի Առաջաբան և Ներածություն, որտեղ խոսվում է սայաթնովագիտության և Սայաթ-Նովայի ապրած ժամանակի ու միջավայրի մասին։ «Կյանքը» բաժնում տրված են մանրամասներ՝ երգչի ծնողների և ծննդավայրի, արհեստի ու կրթության, գիտության և թափառումների մասին։ Փաստական նոր տվյալների հիման վրա լուսաբանված են աշուղ և սիրահար, կուսակրոն և նահատակ բանաստեղծի սերն ու վտարումը վրաց արքունիքից, վերադարձը և երկրորդ վտարումը։

Բանաստեղծի հեղինակային տիպը, ստեղծագործության մշակութաբանական տիպը, բանահյուսական և գրական ակունքները, սիրերգությունը, այլ մոտիվներն ու աշուղական և բանաստեղծական վարպետությունը ներկայացված են «Ստեղծագործությունը» բաժնում։ Գիրքն ունի ամփոփում, բանասիրական դիտողություններ, օգտագործված գրականության ցանկ և անվանացանկ։

Պատասխանատու խմբագիր՝ Հ. Մ. Քենգերյան։

ԿԱՐԵՆ ԱՂԲԱՇՅԱՆ—Պատասխանատվությունը արտադրանքի մատակարարումների համար, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 140 էջ։

Գրքի I գլխում վերլուծվում են արդի պայմաններում տնտեսական հարաբերություններում պատասխանատվության և դրա դերի բարձրացման հարցերը։ II գլխում ցույց են տրվում պայմանագրային պարտավորության մասնակիցների կողմից կիրառվող սանկցիաները (տուգանային սանկցիաներ և վնասի հատուցում, օպերատիվ-տնտեսական սանկցիաներ)։ Հաջորդ երկու գլուխներում խոսվում է տնտեսական ղեկավարման մարմինների կողմից կիրառվող սանկցիաների, արտադրանքի մատակարարումների հետ կապվող հարաբերություններում տնտեսական պատասխանատվության, դրա մեխանիզմի և տնտհաշվարկի կատարելագործման մասին։ Գիրքն ունի վերջաբան և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկ։

Պատասխանատու խմբագիրներ՝ Վ. Վ. Լապան, Ս. Վ. Մուրադյան։